ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (VII դասարան)

**Հարգելի դիմորդ**

**«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է *20* առաջադրանքից*:***

***1–15* առաջադրանքներում լուծումները ներկայացնելը պարտադիր չէ*:*** Դրանք նպատակաուղղված են աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրի նվազագույն պահանջներին*:*

***16 - 20*-ը ընդարձակ լուծում պահանջող առաջադրանքներ են*,*** որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում*:* Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝նշված տեղում*:*

***1 – 15* առաջադրանքից** յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է **2 միավոր*:***

***16 – 20* առաջադրանքից** յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է ***4* միավոր*:***

**Թեստի առավելագույն գնահատականը *50* միավորն է*:***

**Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *120* րոպե*:***

**Մաղթում ենք հաջողություն**

**Մաս I. (1-15).**

1. **Գտնել 12 և 18 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:**

Պատ.`

2. **Գտնել 7 և 12 թվերի միջև գտնվող բոլոր կենտ թվերի գումարը:**

Պատ.`

3. **Քանի՞ անգամ է ամենամեծ եռանիշ թիվը մեծ ամենամեծ միանիշ թվից:**

Պատ.`

4. **Արտահայտել սանտիմետրերով` 4մ 3դմ 8սմ:**

Պատ.`

5. **Գտնել 150 թվի 20%-ը:**

Պատ.`

6. **Գտնել 6 հայտարարով բոլոր կանոնավոր կրճատելի կոտորակների գումարը:**

Պատ.՝

7. $4\frac{3}{32}$ **խառը թիվը ներկայացնել անկանոն կոտորակի տեսքով:**

Պատ.՝

**8. Մայրուղու երկարությունը 60 կմ է: Քարտեզի վրա այն պատկերված է 6սմ երկարությամբ հատվածի տեսքով: Գտնել քարտեզի մասշտաբը:**

Պատ.՝

**9. Ի՞նչ թվանշանով է ավարտվում այն զույգ թիվը, որը բաժանվում է 5-ի:**

Պատ.՝

**10. Ի՞նչ թվանշանով է պետք փոխարինել աստղանիշը, որպեսզի** $\overline{234*1}$ **հնգանիշ թիվը բաժանվի 9-ի:**

Պատ.՝

**(11-12) Գտնել արտահայտության արժեքը:**

**11.** $\left(\frac{2}{5}+\frac{1}{7}\right):\frac{3}{7}-1\frac{1}{3}$

Պատ.՝

**12.** $\left|6\frac{2}{5} - 3\cdot1,8\right|$

Պատ.՝

**(13-14) Լուծել հավասարումները.**

**13.** $\frac{1}{4} : (4,5 + 5x) = 1$

Պատ.՝

**14.** $\frac{5+x}{18} = \frac{25}{9}$

Պատ.՝

**15. Ռացիոնալ թվերը դասավորել աճման կարգով.** $-0,4$; $0,7$; **-2; 1**$\frac{1}{2}$**;**
**1,3; 2; -3:**

Պատ.՝

**Մաս II.** (16-20) Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:

**16. Արկղում կա 10 սպիտակ, 2 կարմիր և 3 կանաչ գնդակ: Առանց նայելու արկղից հանում են մի գնդակ: Ինչի՞ է հավասար կանաչ գնդակ հանելու հավանականությունը:**

Պատ.՝

**17. Խանութը վաճառեց առաջին գնորդին 100 մ կտորի 20%- ը, իսկ երկրորդ գնորդին՝ մնացածի 25%- ը: Քանի՞ մետր կտոր մնաց խանութում:**

Պատ.՝

**18. Այգում աճում են միայն խնձորենիներ և դեղձենիներ, ընդ որում դեղձենիների քանակը 3 անգամ պակաս է խնձորենիների քանակից: Այգու բոլոր ծառերի ո՞ր մասն են կազմում դեղձենիները:**

Պատ.՝

**19. Առաջին խողովակով լողավազանը լցվում է 12 ժամում, երկրորդով՝ 36 ժամում: Քանի՞ ժամում կլցվի լողավազանը, եթե երկու խողովակները բացվեն միաժամանակ:**

Պատ.՝

**20. Երկու հետիոտն միաժամանակ դուրս են եկել իրար ընդառաջ երկու գյուղերից: Առաջին հետիոտնի արագությունը մեծ է երկրորդի արագությունից 1 կմ/ժ-ով, երկրորդի արագությունը՝ 4 կմ/ժ է: Գտնել հեռավորությունը գյուղերի միջև, եթե հետիոտները հանդիպել են դուրս գալուց 2 ժամ անց:**

Պատ.՝